ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅՀԵՂԿՈՄԻ 1920Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ 1921Թ. ՓԵՏՐՎԱՐՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.178

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության է ենթարկվում Հայհեղկոմի 1920թ. դեկտեմբերից 1921թ. փետրվարն ընկած ժամանակահատվածի գործունեությունը՝ ընդգծելով նրա առաջացման նախադրյալները, իշխանական նոր կառուցվածքի ձևավորումը, գաղափարական հռետորաբանությունը և հասարակական արձագանքները: Վերլուծվում են այդ իշխանական կառույցի գործունեության հիմնական կողմերը, որոնք ընթանում էին բոլշևիկների 1918-20թթ. վարած քաղաքականության կրկնությամբ, որը սխալ էր և որը հանգեցրեց մասսայական դժգոհությունների: Դրանց ուժեղ արտահայտությունը եղավ 1921թ. Փետրվարյան ապստամբությունը, որը տապալեց Հայհեղկոմի իշխանությունը: Հոդվածի արդյունքները կարևոր են Հայաստանի խորհրդայնացման և հայաստանյան սոցիալ-քաղաքական պատմության ուսումնասիրության համատեքստում:

Բանալի բառեր և արտահայտություններ. *Հայկական հեղկոմ (հեղափոխական կոմիտե), խորհրդայնացում, բոլշևիկյան կենտրոն, իշխանական կառուցվածք, գաղափարաբանական հռետորաբանություն, ապստամբություն, սոցիալական հակասություններ, ազգային ինքնություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1917թ. Ռուսաստանի հեղափոխական ցնցումներից հետո ձևավորված քաղաքական և գաղափարական վակուումը աստիճանաբար հասավ նաև

Անդրկովկաս՝ ներառյալ Հայաստան: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը սկիզբ դրեց մի նոր կառավարման համակարգի՝ Հայհեղկոմի, որը դարձավ համապարփակ իշխանություն՝ թե՛ քաղաքական, թե՛ վարչական առումով: Այս կառույցը գործեց մի շրջան, որը թեև կարճատև էր, սակայն բեկումնային ազդեցություն ունեցավ Հայաստանի հետագա պետական և հասարակական զարգացման վրա:

Հայհեղկոմի ստեղծումը և գործունեությունը պատմագիտական ուսումնասիրությունների մեջ հաճախ դիտարկվել է միարժեք կամ իբրև ազատագրման ակտ՝ խիստ հակաթուրքական և սոցիալիստական շեշտադրումներով, կամ էլ՝ իբրև խորհրդային կենտրոնական իշխանության՝ բոլշևիկյան գծով ընթանալու թելադրանք: Սակայն վերջին տարիներին ձևավորվել է մի նոր մոտեցում, որի նպատակը ոչ միայն գործընթացների վերապատմումն է, այլ դրանց դիտարկումը գաղափարական, կառուցային և ուժային դաշտում:

Սույն հոդվածի նպատակն է քննել Հայհեղկոմի գործունեությունը 1920թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. մարտ ամիսը՝ դիտարկելով այն ոչ միայն քաղաքական, այլև գաղափարական տեսանկյունից, մասնավորապես վերլուծել, թե ինչպե՞ս է Հայհեղկոմը հանդես եկել որպես խորհրդային իշխանության ինստիտուցիոնալ գործիք Հայաստանում՝ ազգային, գաղափարական ու տարածաշրջանային ուժերի բախման պայմաններում:

Հոդվածը հիմնվում է ինչպես հրապարակված պատմագիտական ուսումնասիրությունների, այնպես էլ ժամանակաշրջանի մամուլի և վավերագրական նյութերի հենքի վրա: Քննությունը կրում է համադրական բնույթ՝ ներառելով նաև արդի գիտական մոտեցումները պատմության քննական վերլուծության տեսանկյունից:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում կիրառվում է պատմագիտության քննական վերլուծության մեթոդը, որի նպատակն է վերարժևորել Հայհեղկոմի գործունեությունը ոչ միայն

բավարարվելով սոսկ փաստերի շարադրանքով, այլև մոտենալով դրան որպես բազմաշերտ քաղաքական և գաղափարական գործընթացի: Քննությունը հիմնված է սկզբնաղբյուրների, այդ թվում ժամանակաշրջանի պաշտոնական փաստաթղթերի, հայտարարությունների, մամուլի նյութերի վրա: Մասնավորապես օգտագործվել են 1920-1921թթ. Հայհեղկոմի հրատարակած որոշումներ, ինչպես նաև ժամանակաշրջանի խորհրդային մամուլում հրապարակված նյութեր:

Գիտական աղբյուրների ընտրության մեջ ընդգրկվել են ինչպես խորհրդային շրջանի պատմագրական փաստեր, այնպես էլ հետխորհրդային, առավելապես քննական բնույթ ունեցող ուսումնասիրություններ: Բնականաբար օգտագործվել են նաև մեր ուսումնասիրությունները **(Ներսիսյան Ա., 2003; 2007; 2019)**, որոնցում առկա են հիմնավոր գնահատականներ և վերլուծական դիտարկումներ՝ վերաբերող թե՛ Հայհեղկոմի ձևավորման հանգամանքներին, թե՛ նրա գործունեության ներքին զարգացումներին:

Հոդվածում համադրվում են հետևյալ մեթոդաբանական ուղղությունները՝

- **Քաղհասարակական վերլուծություն**՝ Հայհեղկոմի գաղափարախոսության և գործողությունների ուսումնասիրություն հասարակության կառուցվածքի համատեքստում,
- **Ինստիտուցիոնալ վերլուծություն**՝ Հայհեղկոմի իշխանական մոդելի և իրավական լիազորությունների մեկնաբանում,
- **Դիսկուրսային մոտեցում**՝ շեշտադրելով պաշտոնական հռետորաբանության ու հասարակական ընկալման տարբերությունները:

Այս մեթոդաբանական մոտեցումները հնարավորություն են տալիս Հայհեղկոմը դիտարկել ոչ միայն որպես պատմական կառույց, այլև որպես գաղափարական հարթակ, որը դերակատար էր թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական փոխակերպումների մեջ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայհեղկոմի ստեղծման նախադրյալները (1920 թ. դեկտեմբեր)

1920թ. աշնանը Հայաստանի Հանրապետությունը կանգնած էր խոր ճգնաժամի առջև՝ միաժամանակ ռազմական, քաղաքական և սոցիալ-տնտեսական ճնշումների ներքո: Մոտ երեք տարի գոյատևած առաջին Հանրապետության կառավարման համակարգը թուլացել էր, իսկ թուրքական բանակի՝ արևմտյան սահմաններին մոտենալու և 1920թ. օգոստոսի համաձայնագրով պայմանավորված **(Ներսիսյան Ա., 2023)** Սյունիքում և Ղարաբաղում կարմիր բանակի առկայությամբ պայմանավորված թաթարական ընդվզումների ֆոնին իշխանությունը հայտնվեց կործանման եզրին:

Դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքված համաձայնագրով իշխանությունը փաստացիորեն փոխանցվեց բոլշևիկյան կողմին **(Սասունի Կ., 1970)**: Դրա արդյունքում ձևավորվեց Հայհեղկոմը՝ որպես Հայաստանի ժամանակավոր հեղափոխական կոմիտե: Այս մարմինը հանդես եկավ որպես լիակատար գործադիր իշխանություն՝ չունենալով խորհրդարանական կամ ժողովրդավարական վերահսկողության տարրեր: Հայհեղկոմը պաշտոնապես ձևավորվեց մի քանի հոգուց կազմված խմբով՝ ղեկավարությամբ Սարգիս Կասյանի, Ավիս Նուրիջանյանի և մյուսների, որոնք Մոսկվայից ուղարկված կուսակցական գործիչներ էին **(Վրացեան Ս., 1958; Խատիսեան Ա., 1968)**:

Հայհեղկոմի ստեղծումը պայմանավորված էր մի քանի գործոններով: Նախ՝ բոլշևիկյան կողմը Հայաստանի խորհրդայնացումը դիտարկում էր ռազմավարական նշանակության քայլ՝ Անդրկովկասում դիրքերն ամրապնդելու համար: Երկրորդ՝ տեղական սոցիալիստական խմբավորումները, չնայած քանակապես սահմանափակ էին, արդեն ձևավորել էին մի կազմակերպչական հենք, որը կարող էր արագորեն օգտագործվել նոր իշխանության հաստատման համար: Երրորդ՝ միջազգային քաղաքական կացությունը (Ռուսաստան-Թուրքիա մերձեցման գործընթաց, քեմալական Թուրքիայի դիվանագիտական ակտիվություն) պահանջում էր կայունություն Անդրկովկասում՝ թեկուզ դա իրականացվեր ուժային մեթոդներով:

Կարծում ենք, որ արդիական է մեր այն տեսակետը՝ համաձայն որի՝ Հայհեղկոմի ձևավորումը ոչ միայն քաղաքական, այլ նաև գաղափարական գործողություն էր՝ ուղղված այն տպավորության հիմնավորմանը, թե Հայաստանը սեփական նախաձեռնությամբ է միանում խորհրդային համակարգին **(Ներսիսյան Ա., 2009)**: Սակայն իրականում, ինչպես ցույց են տալիս և՛ խորհրդային, և՛ արևմտյան աղբյուրները, այդ գործընթացը կրում էր ծրագրված և պարտադրական բնույթ:

Հայհեղկոմի՝ որպես ժամանակավոր իշխանության մարմնի լեգիտիմությունը մշտապես մնում է վիճարկելի: Չկային ընտրություններ, հանրային քննարկումներ կամ իրավական ընթացակարգեր, որոնք կապահովեին դրա ընդունելիությունը տեղական հասարակության կողմից: Պետք է ավելացնել նաև, որ Արևմուտքի կողմից իշխանության փոփոխության նկատմամբ դրսևորվեց զգուշավոր վերաբերմունք:

Իշխանական կառուցվածքի ձևավորումը և առաջին քայլերը

Հայհեղկոմը, իշխանությունն իր ձեռքը վերցնելով 1920 թ. դեկտեմբերի 2-ից սկսած, անմիջապես ձեռնամուխ եղավ նոր վարչական համակարգի ձևավորմանը: Մինչ այդ գոյություն ունեցող պետական կառույցները՝ նախարարություններն ու խորհրդարանը, ցրվեցին, իսկ իշխանության բոլոր լծակները կենտրոնացվեցին մի քանի անձից բաղկացած կոմիտեի ձեռքում: Հայհեղկոմը ստանձնում էր միաժամանակ օրենսդիր, գործադիր և դատական գործառույթներ՝ առանց իշխանությունների տարանջատման որևէ սկզբունքի:

Հեղափոխական կոմիտեի առաջին քայլերը կապված էին նոր իշխանության հիմքերի ամրապնդման, հասարակական վերահսկողության հաստատման և գաղափարական հենքի ձևավորման հետ: Առաջին իսկ օրվանից հայտարարվեց նախկին պաշտոնյաների, հատկապես դաշնակցական գործիչների ձերբակալության և նրանց նկատմամբ հետապնդումների մասին, ինչը սկսեց հասարակության որոշ խավերի մեջ առաջացնել անհանգստություն և անվստահություն:

Հայհեղկոմի կառուցվածքը ենթադրում էր հանձնաժողովների և տեղական կոմիտեների միջոցով իշխանության իրականացում ողջ երկրի տարածքում: Նմանապես գավառներում սկսեցին գործել գավառային հեղկոմներ, որոնք ենթարկվում էին կենտրոնական մարմնին: Սակայն շատ դեպքերում տեղերում իշխանությունն իրականացվում էր առանց հստակ իրավական կամ վարչական լիազորագրերի՝ ստեղծելով քաոսային վիճակ:

Սոցիալական ոլորտում Հայհեղկոմը փորձեց ապահովել զանգվածների աջակցությունը՝ մի կողմից խոստանալով հողազրկված գյուղացիների հողերի հատկացում, մյուս կողմից՝ աշխատանքային օրենսդրության միջոցով բանվոր դասակարգի դիրքերի բարելավում: Սակայն տնտեսական ճգնաժամը, սննդամթերքի պակասը և քայքայված ենթակառուցվածքները խոչընդոտում էին քաղաքականության գործնական իրականացումը:

Այս փուլում կոմիտեն փորձեց լեգիտիմություն ձևավորել նաև գաղափարական միջոցներով՝ հրապարակելով մի շարք քաղաքական հռչակագրեր և բաց նամակներ, որոնցում շեշտվում էր, որ նոր իշխանությունը հայ աշխատավորության ազատ կամարտահայտման արդյունք է: Սակայն նոր վարչակարգի կայացման գործընթացը կրել է ավելի շուտ բռնի և ուղղորդված բնույթ, քան թե նախատեսել է ժողովրդավարական սկզբունքներ **(Սասունի Կ.,1970)**:

Արդյունքում 1920թ. դեկտեմբերից մինչև 1921թ. փետրվար ընկած ժամանակահատվածում Հայհեղկոմի իշխանությունն արդեն հաստատված էր ողջ երկրի տարածքում, սակայն դրա ամրապնդման հիմքերը ավելի շատ հիմնվում էին ուժի կիրառման, վարչական ճնշման և կուսակցական վերահսկողության վրա, քան հասարակական լայն աջակցության:

Գաղափարական հռետորաբանություն և հասարակական արձագանք

Հայհեղկոմի գործունեության առաջին փուլում կարևոր դեր էր վերապահված ոչ միայն վարչական և ռազմական գործողություններին, այլև գաղափարական հռետորաբանությանը: Նորաստեղծ իշխանությունը ձգտում էր

իրեն ներկայացնել որպես ազգային-սոցիալական առաջընթացի մարմին, որը միաժամանակ վերացնում է թե՛ արտաքին կախվածությունը, թե՛ ներքին շահագործումը: Այդ նպատակով հրապարակվում էին քաղաքական հռչակագրեր, հայտարարություններ և կոչեր, որոնք ուղղված էին հասարակության տարբեր խմբերին՝ գյուղացիներին, բանվորներին, մտավորականությանը:

Հայհեղկոմի կողմից որդեգրված գաղափարական լեզուն ընդօրինակում էր բոլշևիկյան դասական հռետորաբանության ձևաչափը՝ ընդգծելով սոցիալական հավասարությունը, «աշխատավորների ազատագրված հայրենիքը» և կապիտալիստական կարգերի վերջնական մերժումը: Հայաստանի մամուլում ակտիվորեն օգտագործվում էին այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «աշխատավորների իշխանություն», «ժողովրդական հեղափոխություն», «ցարական և դաշնակցական ռեժիմների դեմ պայքար»:

Սակայն գաղափարական հռետորաբանության և հասարակական ընկալման միջև գոյություն ուներ խոր հակասություն: Հայ հասարակության զգալի հատվածը նոր իշխանությանը վերաբերվում էր ոչ թե իբրև ազատագրող կողմի, այլ իբրև օտարի բռնության հաստատողի: Մասնավորապես մտավորական շրջանակներում և նախկին քաղաքական գործիչների միջավայրում տարածված էր այն ընկալումը, ըստ որի Հայհեղկոմը հանդիսանում էր մոսկովյան ուղղակի թելադրանքի գործիք: Այս արձագանքները նկատելի են ոչ միայն հետագայում լույս տեսած հուշագրություններում, այլ նաև որոշ պարբերականներում և մանավանդ գաղտնի շրջանառվող նյութերում **(Վրացեան Ս., 1958; Խատիսեան Ա.,1968; Ռուբէն, 1952; Ներսիսյան Ա., 2023):**

Ըստ որոշ պատմաբանների՝ նոր իշխանության նկատմամբ բացասական վերաբերմունքի հիմնական պատճառը ոչ այնքան գաղափարախոսության առերեսությունն էր, որքան այն ձևը, որով իշխանությունն իրացվում էր: Բռնությունների, բռնագաղթերի, ձերբակալությունների և բռնագրավումների ալիքը լուրջ հարված հասցրեց Հայհեղկոմի՝ «ժողովրդի անունից» խոսելու և գործելու հավաստիությանը:

Հայհեղկոմի գործունեության գաղափարախոսական հնարանքը չէր աշխատում, քանի որ քարոզչության եղանակները կոպիտ էին, որոնք թիրախավորում էին ժողովրդական զանգվածներին և երբեք չէին ընթանում հասարակության տարբեր խավերի հետ երկխոսության համադրությամբ **(Ներսիսյան Ա., 2003; Սասունի Կ., 1970; Վրացեան Ս., 1958)**:

Ի վերջո, Հայհեղկոմի կողմից առաջարկվող սոցիալիստական կարգերի մոդելը շատերի համար անհասկանալի կամ նույնիսկ վտանգավոր էր՝ հատկապես գյուղատնտեսության ոլորտում, որտեղ հողի ազգայնացումը դիտվում էր իբրև տնտեսության քայքայում և ունեզրկում: Հասարակական վակուումը, որ առաջացավ պետական նախկին կառուցվածքի փլուզման և նոր, բռնապետական կարգերի հաստատման արդյունքում, հանգեցրեց ներքին լարվածության խորացման, որի հետևանքները ի հայտ եկան արդեն 1921 թվականի սկզբին՝ ընդվզումների և ապստամբության տեսքով:

Հայհեղկոմի փոխհարաբերությունները բոլշևիկյան կենտրոնական կառույցների հետ

Հայհեղկոմի գործունեությունը չի կարող ամբողջությամբ հասկանալ առանց նրա հարաբերությունների վերլուծության Խորհրդային Ռուսաստանի՝ հատկապես ՌԿ(բ)Կ կենտրոնական կառույցների հետ: Չնայած կոմիտեն ներկայանում էր որպես անկախ մարմին, իրականում նրա գործունեությունը սկզբից ևեթ գտնվել է բոլշևիկյան կուսակցության՝ մասնավորապես Կովկասյան Բյուրոյի ուղիղ վերահսկողության տակ:

Հայաստանի խորհրդայնացումը դիտարկվում էր որպես Խորհրդային Ռուսաստանի ռազմավարական ծրագիր՝ Անդրկովկասի լիարժեք միացման և թյուրքական աշխարհում ազդեցության ամրապնդման շրջանակներում: Այս համատեքստում Հայհեղկոմը խաղում էր տեխնիկական գործառույթի դեր, որի հիմնական առաքելությունն էր նոր կարգերի ներդրումը տեղում՝ առանց արմատական լեգիտիմացման գործընթացների:

Ստեղծման առաջին իսկ օրերից Հայհեղկոմի կազմը և լիազորությունները հաստատվում էին Մոսկվայից: Տեղի կոմունիստական խումբը, որ դրսևորվում էր որպես ՀԿ(բ)Կ, չուներ ինքնուրույն որոշումներ կայացնելու իրական հնարավորություն: Իսկ երբ Հայաստանի խորհրդայնացումից հետո շատ չանցած Երևան ժամանեց չեկայի նախագահ Գևորգ Աթարբեկյանը, Հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանն առհասարակ դարձավ ձևական կերպար և ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց նրա և հեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանի ձեռքում: Նրանք բացարձակապես իրենց գործունեության մեջ հաշվետու չէին Հեղկոմի նախագահին, ավելին. իրականացնում էին քայլեր, որոնք բոլշևիկների Ռուսաստանում 1918-20թթ. վարած քաղաքականության կրկնությունն էին:

Նույնը վկայում է նաև արևմտյան պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը, ով նշում է, որ «Հայաստանի խորհրդայնացման ընթացքում տեղական ղեկավարությունը հիմնականում կատարում էր կենտրոնական իշխանության հրահանգները՝ առանց լայն նախաձեռնության և մանևրելու տարածության» (**Hovannisian R., 1982**):

Հատկապես կարևոր է ընդգծել նաև կոմիսարական համակարգի ներմուծումը, որով վերահսկվում էր պետական ապարատը՝ տեղից ուղարկված ռուս կամ վրացի կոմունիստների միջոցով: Այս գործելաոճը արմատապես փոխեց հայաստանյան քաղաքական մշակույթը՝ անցում կատարելով կուսակցական գերիշխանության:

Բացի գաղափարական վերահսկողությունից, Կենտրոնը վերահսկում էր նաև ֆինանսական և տնտեսական քաղաքականությունը: 1921 թ. սկզբին Մոսկվան արդեն ուղարկել էր մի շարք նյութական և սննդային օգնության խմբաքանակներ՝ դրանցում ներառելով տեղում վերահսկող պաշտոնյաների: Այդ գործելաոճը ցույց էր տալիս, որ Հայաստանը դիտվում էր ոչ թե իբրև հավասար խորհրդային հանրապետություն, այլ՝ սահմանային գոտի՝ ռազմավարական նշանակությամբ, որը պետք է կառավարվի վերևից:

1921 թ. Փետրվարյան ապստամբության նախանշանները և Հայհեղկոմի արձագանքը

1921 թ. սկզբին Հայաստանում սկսեցին դրսևորվել Հայհեղկոմի գործունեության նկատմամբ խիստ դժգոհության նշաններ, որոնք հանգեցրին փետրվարյան լայնամասշտաբ ապստամբության: Այս գործընթացը չէին կանխատեսել տեղական իշխանությունները, և նրանց արձագանքը շտապ և հաճախ անհամաչափ էր:

Ապստամբության նախանշանները սկսվեցին գյուղական տարածքներում՝ հատկապես Զանգեզուրում, որտեղ հողի ազգայնացման քաղաքականությունը բուռն դիմադրության էր հանդիպել: Գյուղացիների համար հողն այլևս ոչ թե տնտեսական միջոց էր, այլ սոցիալական՝ ընտանիքի գոյատևման և ինքնության հիմք: Հողի բռնազավթումը և նախկին տնօրինման ձևերի կտրուկ փոփոխությունը խթան են հանդիսանում ընդվզումների համար:

Քաղաքներում ևս աճում էր դժգոհությունը տնտեսական ծանր պայմանների և ազատությունների սահմանափակման պատճառով: Ժողովրդական ընդհանուր դժգոհության պայմաններում Դաշնակցություն կուսակցության ընդհատակյա կառույցները գաղտնորեն իրենց ձեռքը վերցրին ապստամբության կազմակերպման խնդիրը: Ապստամբությանը նպաստեց նաև ազգային տրամադրություններով խմբերի ակտիվությունը: Այն նպաստեց լայնամասշտաբ անկարգությունների կազմակերպմանը: Փետրվար ամսին ընդվզումները լայն տարածում ստացան՝ դառնալով մի նոր փորձաքար Հայհեղկոմի իշխանության կայունության համար **(Ներսիսյան Ա., 2019; Սասունի Կ., 1970; Վրացեան Ս., 1958)** :

Հայհեղկոմը դիմեց կոշտ միջոցների՝ զանգվածային ձերբակալությունների, ռազմական ուժի կիրառման և քաղաքական հետապնդումների: Այդ շրջանի որոշ հրամաններում պարզորոշ երևում է իշխանության մտահոգությունը՝ զսպելու ապստամբությունը և վերականգնելու խորհրդային կարգերը: Սակայն այդ

միջոցները չհաղթահարեցին խորքային սոցիալական տագնապները, որոնք մնացին և դրդեցին լայն բախումների:

Փետրվարյան ապստամբությունը Հայհեղկոմի քաղաքականությունից փաստացի հիասթափության արդյունք էր, առանց տեղական առանձնահատկությունների հաշվառման ռուսական հեղափոխության կարգախոսների կուրորեն կիրառումը, որի ցավալի սոցիալական, տնտեսական և քաղաքական հետևանքները չէին կարող մեկ նպատակի շուրջ չմիավորել ժողովրդին, որի արդյունքը եղավ Հայհեղկոմի իշխանության տապալումը: 1921թ. Փետրվարիմ 18-ից մինչև ապրիլի 2-ը Հայաստանի մեծ մասի վրա հաստատվեց <<Հայրենիքի փրկության կոմիտեի>> իշխանությունը, որի մաանրամասներին անդրադառնալը դուրս է մեր նպատակից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. փետրվար ընկած ժամանակահատվածը եղել է հայ հասարակության և պետական կառավարման համար բարդ ու հակասական փուլ: Հայհեղկոմի ստեղծումը, որն արտահայտում էր Խորհրդային Ռուսաստանի ռազմավարական նպատակները Անդրկովկասում, հիմքում չէր ունեցել լայն հասարակական աջակցություն:

Նոր իշխանությանը բնորոշ էր կենտրոնացված և ավտորիտար էությունը, որտեղ ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց մի քանի գործիչների ձեռքում՝ ազատության և բազմակարծության սահմանափակմամբ: Տեղական ու միջազգային քաղաքական պայմանները, ներառյալ ռազմական լարվածությունը և տնտեսական ճգնաժամը, խթանել են բռնաճնշումների գործիքների կիրառումը, ինչն ավելի էր խորացրել հասարակական հակասությունները:

Խորհրդային կենտրոնի անմիջական ազդեցությունն ու վերահսկողությունը սահմանափակեցին տեղական նախաձեռնողականությունն ու քաղաքական ինքնավարությունը, ինչը խթանեց ներքին հակասությունների խորացումը: Արդյունքում Փետրվարյան ապստամբությունը տապալեց նրա իշխանությունը,

որը եղավ սակավաբեր ժողովրդի քաղաքական, սոցիալական, տնտեսական ակնկալիքների ընկալման տեսանկյունից:

Այս պատմական շրջանը կարևոր է հասկանալու համար ոչ միայն Հայաստանի խորհրդայնացման գործընթացը, այլև տեղական և կենտրոնական իշխանությունների հարաբերությունների շարժընթացը, հասարակական արձագանքների և սոցիալական լարվածությունների զարգացման լանդշաֆտը, ինչպես նաև խորհրդային կարգերի ներմուծման դժվարությունները տեղական յուրահատկությունների անտեսման պայմաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Խատիսեան Ա. (1968),** Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, Տպ. «Սեւան»:
2. **Ներսիսյան Ա. (2019)**, Կարո Սասունի, Երևան, «Տիր» հրատ.:
3. **Ներսիսյան Ա. (2003)**, Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), Երևան, Իրանագիտական Կովկասյան կենտրոն:
4. **Ներսիսյան Ա. (2007)**, Ռուբեն, Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ.:
5. **Ներսիսյան Ա. (2023)**,Պատմաքննական վերլուծություններ, Երևան, «Տիր» հրատ.:
6. **Ռուբէն (1952)**, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, Լոս Անջելես, տպ. «Հորիզոն»:
7. **Սասունի Կ. (1970)**, Փետրուարեան ապստամբութիւնը, Պէյրութ, տպ. «Սեւան»:
8. **Վրացեան Ս. (1958)**, Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, տպ. «Մշակ»:

REFERENCES

1. **Xatisyan A. (1968),** Hayastani Hanrapetowt'ean c'agowmn ow zargacowmy' /The Origin and Development of the Republic of Armenia/, Beirut, “Sevan” Press.

2. **Nersisyan A. (2019),** Karo Sasowni /Karo Sasuni/, Yerevan, Tir Publishing House.
3. **Nersisyan A. (2003),** Avetiq Sahakyan (Hayr Abraham) /Avetik Sahakyan (Father Abraham)/, Yerevan, Iranology Caucasian Center.
4. **Nersisyan A. (2007),** R'owben */Ruben/*, Yerevan, "Edit Print" Publishing House.
5. **NersisyanA. (2023),** Patmaqnnakan verlowc'owt'yownner */Historical-Critical Analyses/*, Yerevan, Tir Publishing House.
6. **Rouben (1952),** Hay Yeghap'oxakani my' yishataknery' */Memoirs of an Armenian Revolutionary/*, Los Angeles, "Horizon" Press.
7. **Sasuni K. (1970),** P'etrowarean apstambowt'iwny' */The February Uprising/*, Beirut, "Sevan" Press.
8. **Vratcyan S. (1958)**, Hayastani Hanrapetowt'iwn */The Republic of Armenia/*, Beirut, "Mshak" Press.

Ashot Nersisyan

Critical Analysis of the Armrevkom's Policy from December 1920 to February 1921

Conclusion

Key words and expressions: *Armenian Revkom, Sovietization, Bolshevik center, Power structure, Ideological rhetoric, Uprising, Social contradictions, National identity*

This article presents a critical analysis of the activities and developments of the Armenian Revolutionary Committee (Hayheghkom) during the period from December 1920 to February 1921. The study explores the historical background that led to the establishment of Hayheghkom as a governing body during a highly volatile period in Armenian history. It focuses on the committee's administrative structure, ideological rhetoric, and the complex relationship with the Bolshevik central authorities in Moscow.

The paper highlights how the revolutionary committee was both a product and an instrument of Sovietization in Armenia, tasked with implementing a new socio-political order modeled on Bolshevik principles. Despite its declared mission to represent the proletariat and peasantry, Hayheghkom faced significant challenges due to lack of broad popular legitimacy and widespread resistance among various social strata, especially rural populations wary of land nationalization policies.

The ideological narrative promoted by Hayheghkom employed classic Bolshevik slogans and rhetoric aimed at mobilizing workers and peasants toward socialist transformation. However, this ideological messaging often clashed with entrenched national sentiments and social realities, leading to considerable skepticism and hostility from segments of Armenian society, including intellectuals and former political elites.

Moreover, the article discusses the direct control exerted by the Bolshevik center over the Armenian committee's decisions and operations, which limited the autonomy of local leaders and intensified the perception of Hayheghkom as a Moscow proxy. The centralized control extended to economic and military spheres, reinforcing the committee's dependence on external support and supervision.

The analysis culminates in examining the outbreak of the February 1921 uprising, which reflected deep-seated social grievances and political discontent with the new regime's repressive measures and lack of popular engagement. The uprising underscored the inherent contradictions within the Sovietization process and revealed the limits of revolutionary authority imposed from above.

Ultimately, the article argues that the period under study represents a critical phase in Armenia's transition to Soviet rule, illustrating the complexities of imposing ideological and political change in a society marked by traditional structures and nationalist aspirations. This case study contributes to a broader understanding of early Soviet republics' formation dynamics and the interplay between local conditions and central directives.

Ашот Нерсисян

Критический анализ политики Армревкома в период с декабря 1920 по февраль 1921 года

Заключение

Ключевые слова и выражения: *Армревком, Советизация, Большевистский центр, Структура власти, Идеологическая риторика, Восстание, Социальные противоречия, Национальная идентичность.*

Данная статья представляет собой критический анализ деятельности Армянского революционного комитета (Архевкома) в период с декабря 1920 года по февраль 1921 года — одного из самых сложных и противоречивых этапов в истории Армении. В работе рассматриваются исторические предпосылки создания Архевкома как органа власти, его организационная структура, идеологическая риторика, а также взаимоотношения с центральными большевистскими властями в Москве.

Автор показывает, что Архевком являлся одновременно продуктом и инструментом советизации Армении, который был призван внедрять новый социалистический порядок, основанный на принципах большевизма. Несмотря на провозглашённую миссию представлять интересы пролетариата и крестьянства, комитет столкнулся с серьезными трудностями из-за отсутствия широкой народной поддержки и сопротивления многих социальных слоев, особенно крестьян, которые негативно воспринимали политику национализации земель.

Идеологическая риторика Архевкома опиралась на классические большевистские лозунги и была направлена на мобилизацию рабочих и крестьян для построения социалистического общества. Однако эта риторика часто вступала

в противоречие с национальными чувствами и социальными реалиями армянского общества, вызывая скептицизм и недовольство среди интеллектуалов и бывших политических элит.

В статье также анализируется влияние центра — большевистской партии — на деятельность Архевкома, которое ограничивало автономию местных руководителей и усиливало восприятие комитета как марионетки Москвы. Централизованный контроль распространялся не только на политическую, но и на экономическую и военную сферы, что делало комитет зависимым от внешней поддержки и надзора.

Кульминацией исследования становится рассмотрение февральского восстания 1921 года — выражения глубинных социальных проблем и политического недовольства репрессивной политикой новой власти и отсутствием диалога с населением. Восстание выявило внутренние противоречия советизации и ограничения революционной власти, навязанной сверху.

В заключение подчеркивается, что рассматриваемый период является ключевым этапом перехода Армении к советской власти, демонстрируя сложности внедрения идеологических и политических преобразований в обществе с традиционными структурами и национальными устремлениями. Исследование вносит значимый вклад в понимание процессов становления ранних советских республик и взаимодействия между местными условиями и централизованным руководством.

Աշոտ Ներսիսյան – Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց պատմություն, հայ ազգային ազատագրական շարժումների և հայ քաղաքական մտքի պատմություն, հայ քաղաքական կուսակցությունների պատմություն, Հայկական հարցի պատմություն, Հայաստանի առաջին հանրապետության պատմություն, հայ-

թուրքական հարաբերությունների պատմություն, հայ մշակույթի պատմություն: Հեղինակել է 18 մենագրություն, 200 -ից ավելի գիտական հոդվածներ: ashot-nersisyan@mail.ru, ashot-nersisyan@ysu.am.

Ashot Nersisyan – Professor at the Department of Armenian History, Yerevan State University: Doctor of Historical Sciences. Research interests: Armenian history, the history of the Armenian national liberation movements and political thought, the history of Armenian political parties, the history of the Armenian Question, the history of the First Republic of Armenia, Armenian-Turkish relations, and Armenian cultural history. Author of 18 monographs and over 200 scholarly articles. **ashot-nersisyan@mail.ru, ashot-nersisyan@ysu.am**

Ашот Нерсисян – Профессор кафедры истории Армении Ереванского государственного университета, доктор исторических наук. Научные интересы: история Армении, история армянского национально-освободительного движения и армянской политической мысли, история армянских политических партий, история Армянского вопроса, история Первой Республики Армения, история армяно-турецких отношений, история армянской культуры. Автор 18 монографий и более 200 научных статей. **ashot-nersisyan@mail.ru, ashot-nersisyan@ysu.am**

Խմբագրություն է ուղարկվել 25.07.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.08.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.